ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«22» 05 2023թ.
№ ԿԼՈՒ/2-1081

«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ -ին
ՀՎՀՀ 01043009
ՀՀ Երևան, Հ.Հովհաննիսյան 24/7
հեռ. 055755455

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի միջև 23.12.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-3/1-3 (համաձայնագրեր N1 և N2 առ 20.03.2023թ.) գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն պարտավոր էր 2023թ. 2-րդ եռամսյակում, մատակարարել՝

1. Նվերներ և պարգևներ/ Գավաթներ՝ մեծ, միջին, փոքր- 60 հատ
2. Պատի ժամացույցներ/ Ժամացույց-390 հատ
3. Տեղեկատվական վահանակներ/ ՀՀ Ազգային հերոսների տպագրված պաստառներ-1020 հատ
4. Շախմատ/ Շախմատ-շաշկի-550 լրակազմ
5. Խորհրդանշական նվերներ/ «Հուշանվեր՝ շախմատ դեկորատիվ»-15 հատ
6. Ձայնային սարքավորումներ/ Ձայնային սարքավորում-15 հատ
7. Տեղեկատու/ վաշտի (մարտկոցի) կրովի դիտողական քարոզչական լրակազմ-30 հատ
8. Ռադիոընդունիչներ/ Ռադիոընդունիչ-600 հատ
9. Նկարչական վրձիններ/Նկարչական և քանդակագործական միջոցներ/-30 հատ
10. Թվային լուսանկարչական ապարատներ/ Թվային ֆոտոապարատ-30 հատ

Քանի որ վերոնշյալ ապրանքները չեն մատակարարվել, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. օգոստոսի 21-ին** միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **432 794** ՀՀ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 07.08.2023թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **3 462 350** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **5 193 525** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. օգոստոսի 31-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **3 462 350** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **5 193 525** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, մինչև 2023թ. օգոստոսի 31-ը ներառյալ, ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ